ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 12.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 39/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոք) և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետ նաև՝ Կենտրոն) 07.04.2017թ. ներկայացված եզրակացությունը, պարզել է հետևյալը.

1. «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.

«Յուքոմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.03.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից

հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ներկայացված հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը 01.02.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 7 արձանագրությամբ հաստատել է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ի՝ հրավերով (ծանուցումով) սահմանված ժամկետում որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, ճանաչել է «Յուքոմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից և որոշել է ներկայացնել առաջարկ՝ պայմանագիր կնքելու համար:

Ընկերությունը հայտնել է, որ նշված արձանագրությունը պատշաճ կարգով ուղարկվել է «Յուքոմ» ՍՊԸ-ին:

07.02.2017թ.-ին Պատվիրատուն «Յուքոմ» ՍՊԸ-ին հայտնել է, որ վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից, ներկայացրել է հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման թիվ ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017 պայմանագրի նախագիծը և առաջարկել է հինգ օրվա ընթացքում կնքել այն:

Ընկերությունը ստորագրել է թիվ ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017 գնման ընթացակարգի պայմանագիրը և փոխանցել այն Պատվիրատուին:

Այնուհետև, անհասկանալի պատճառներով 14.02.2017թ.-ի ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ Պատվիրատուն անհիմն կարգով հայտը չեղյալ է ճանաչել: Ընդ որում, Պատվիրատուն չեղյալ է հայտարարել 01.02.2017թ. թիվ 1 որոշումը, ինչն ինքնին հանգեցնում է թիվ 6 արձանագրության անվավերությանը, քանի որ թիվ 1 որոշում Ընթացակարգի շրջանակներում չի էլ կայացվել:

Ըստ Մասնակցի՝ հայտի անհիմն չեղյալ համարելը Պատվիրատուն փորձել է բացատրել նրանով, որ իբրև թե արձանագրվել է խախտում՝ այն է «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագրում բացակայում են սարքերի անվանումները և տեխնիկական բնութագրերը, սակայն հրավերի մեջ չի եղել սարքերի հստակ նկարագրության որևէ պահանջ:

Մասնակցի պնդմամբ՝ իր անհիրավաչափ որոշումը գնահատող հանձնաժողովը կայացրել է՝ հիմք ընդունելով և սխալ մեկնաբանելով ՀՀ կառավարության «Գնումների

գործընթացի մասին» 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ հոդվածի 4-րդ կետը, այն է՝ «Հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը»:

Մասնակիցը նշել է, որ գնահատող հանձնաժողովն իր թիվ 6 արձանագրությամբ մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը ոչ թե հայտերի բացման նիստում, ինչպես նախատեսված է ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի մասին» 168-Ն որոշմամբ, այլ անհասկանալի և գործող օրենսդրությամբ չնախատեսված կարգով՝ հրավիրված 2-րդ՝ 14.02.2017թ.-ի նիստում: «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին ամբողջությամբ համապատասխան, քանի որ հրավերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են:

Մասնակիցը հայտնել է, որ 24.02.2017թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը, այս անգամ սխալ կիրառելով և մեկնաբանելով Օրենքի 12-րդ հոդվածը և 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, անհասկանալի պատճառներով Ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Վկայակոչելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ընկերությունը համարում է, որ ձեռքբերվող հեռախոսակապի ծառայությունների նկարագրությունը ամբողջությամբ և հստակ տրված է եղել համապատասխան գնման հրավերով և պարզապես չէր կարող այլընտրանքային մեկնաբանության տեղիք տալ:

Ըստ Ընկերության՝ գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ինքնիրավչություն և առանց որևէ հիմնավորման և համապատասխան իրավասության՝ որակել գնման առարկան իբրև ոչ հստակ, ինչպես նաև նշել է, որ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը ևս սխալ է կիրառվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Վկայակոչելով Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը, Ընկերությունը նշել է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ն ստացել է Պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի նախագիծը և ստորագրել այն: Մինչ ստորագրելը Պատվիրատուն կարող էր փոփոխություններ կատարել գնման առարկայում, եթե վերջինս իր կարծիքով հստակ չէր, սակայն Պատվիրատուն չի օգտվել իր այդ իրավունքից, հետևաբար, պայմանագրի նախագծում արտացոլված գնման առարկան նկարագրված է եղել ամբողջությամբ և հստակ, և Պատվիրատուն որևէ հիմք չի ունեցել պայմանագիրը չկնքելու համար:

Ընկերությունը բողոքով պահանջել է չեղյալ հայտարարել 2017թ. փետրվարի 24-ի նիստի թիվ 8 արձանագրությունը:

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է թիվ 6, թիվ 7 և թիվ 8 արձանագրությունների պատճենները և Ընթացակարգին վերաբերող այլ փաստաթղթերի պատճեններ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքի քննության շրջանակներում 10.04.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Յուքոմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.

Կենտրոնը 27.03.2017թ. թիվ 02/04-1/1181-17 գրությամբ դիմել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և բողոքի վերաբերյալ տալ կարծիք:

03.04.2017թ. թիվ 09/15.3/5220-17 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, ուսումնասիրելով 23.02.2017 թվականի <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի թեժ գծով ստացված բողոքը, պարզել է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջությամբ և հստակ նկարագրված չէ ձեռքբերվող ապրանքը, մասնավորապես պարզ չէր, թե ինչ

տեխնիկական սարքավորումներ են անհրաժեշտ, որը կարող էր պատճառ հանդիսանալ այլընտրանքային մեկնաբանությունների: Մասնավորապես, տեխնիկական սարքավորումները անհրաժեշտ էին տաքսիների լիցենզիաների վերահսկողության աշխատանքների կազմակերպման համար, ինչը պետք է իրականացվեր պլանշետների միջոցով, սակայն <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում գնման առարկայի տեխնիկական բնութագրում պլանշետներ նախատեսված չէին, և այլ սարքավորումներ առաջարկելու դեպքում հնարավոր չէր լինի կատարել վերը նշված աշխատանքները, և կառաջանար գնի էական տարբերություն: Այսինքն չէր պահպանվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-39/17 ծածկագրով 10.04.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչը չի ապահովել իր մասնակցությունը, սակայն պատշաճ ծանուցված է եղել նիստի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ:

3. ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

Կենտրոնը Խորհրդին է ներկայացրել իր 07.04.2017թ. եզրակացությունն և առաջարկել է «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ-ն:

2. Գնահատող հանձնաժողովի 23.01.2017թ. որոշմամբ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

3. 24.01.2017թ.-ին Պատվիրատուն Մասնակցին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «Յուքոմ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Համաձայն գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. որոշման՝ «Յուքոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. 07.02.2017թ.-ին Պատվիրատուն Մասնակցին հայտնել է, որ Ընթացակարգի 1-4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ-ն, ներկայացրել է հեռախոսակապի ծառայությունների ձոռքբերման թիվ ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017 պայմանագրի նախագիծը և առաջարկել է հինգ օրվա ընթացքում կնքել այն, ինչպես նաև ներկայացնել պայմանագրի ապահովումը՝ տուժանքի ձևով:

6. 14.02.2017թ.-ին Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2017թ. որոշման համաձայն՝ չեղյալ է հայտարարվել գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. որոշումը՝ Ընթացակարգի 2-4-րդ չափաբաժինների մասով լրացուցիչ պարզաբանում ստանալու հիմքով: Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պարզաբանում «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 2-4-րդ չափաբաժինների մասով ներկայացված սարքերի անվանումների և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ:

7. 23.02.2017թ. ժամը 12:27-ին Կենտրոնը թեժ գծով ահազանգ է ստացել առ այն, որ Պատվիրատուի կողմից հայտարարված Ընթացակարգի հրավերի տեխնիկական

բնութագրով պարզ չէ, թե Պատվիրատուին ինչ ապրանքատեսակ էր անհրաժեշտ, ինչը խոչընդոտ է հանդիսացել Ընկերության մասնակցության համար: Ահազանգողը խնդրել է Պատվիրատուին Ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ խախտվել են Օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

8. Կենտրոնը 23.02.2017թ.-ին էլեկտրոնային եղանակով դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով կարծիք ներկայացնել Կենտրոնի թեժ գծին 23.02.2017թ. ժամը 12:27-ին ստացված ահազանգի վերաբերյալ:

9. Ի պատասխան վերոնշյալ գրությանը՝ Պատվիրատուն 27.02.2017թ. թիվ 09.15.3/2818-17 գրությամբ հայտնել է, որ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2017թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության՝ գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով 23.02.2017թ.-ին Կենտրոնի թեժ գծով ստացված բողոքը, պարզել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջությամբ և հստակ նկարագրված չէ ձեռքբերվող ապրանքը, որը կարող էր պատճառ հանդիսանալ այլընտրանքային մեկնաբանությունների: Հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ Պատվիրատուն ***Ընթացակարգը հայտարարել է չկայացած***:

5. ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումներն և եզրահանգումը.

Խորհուրդն, ուսումնասիրելով «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2017թ. ներկայացված բողոքն և կից փաստաթղթերը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 23.02.2017թ. թիվ 09/16-1/2587-17, 27.02.2017թ. թիվ 09/15.3/2818-17 և 03.04.2017թ. թիվ 09/15.3/5220-17 գրությունները և կից փաստաթղթերը, գտնում է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

23.02.2017թ. ժամը 12:27-ին Կենտրոնը թեժ գծով ահազանգ է ստացել առ այն, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/28-1/2017» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պարզ չէ, թե Պատվիրատուին ինչ ապրանքատեսակ էր անհրաժեշտ, ինչը խոչընդոտ է հանդիսացել Ընկերության մասնակցության համար:

Ահազանգողը խնդրել է Պատվիրատուին Ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ խախտվել են Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Կենտրոնը 23.02.2017թ.-ին էլեկտրոնային եղանակով դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով կարծիք ներկայացնել Կենտրոնի թեժ գծին 23.02.2017թ. ժամը 12-27-ին ստացված ահազանգի վերաբերյալ:

Ի պատասխան Կենտրոնի թեժ գծին ստացված ահազանգի՝ Պատվիրատուն 27.02.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով 23.02.2017թ. Կենտրոնի թեժ գծով ստացված բողոքը, պարզել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջությամբ և հստակ

նկարագրված չէ ձեռքբերվող ապրանքը, որը կարող էր պատճառ հանդիսանալ այլընտրանքային մեկնաբանությունների, քանի որ չէին պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

Պատվիրատուն Կենտրոնին ուղղված 03.04.2017թ. թիվ 09/15.3/5220-17 գրությամբ պարզաբանել է, որ հրավերով հստակ սահմանված չէր, թե ինչ տեխնիկական սարքավորումներ են անհրաժեշտ, որը հիմք կարող էր հանդիսանալ այլընտրանքային մեկնաբանությունների: Տեխնիկական սարքավորումները անհրաժեշտ էին տաքսիների լիցենզիաների վերահսկողության աշխատանքների կազմակերպման համար, ինչը պետք է իրականացվեր պլանշետների միջոցով, սակայն Ընթացակարգի հրավերում գնման առարկայի տեխնիկական բնութագրում պլանշետներ նախատեսված չէին, և այլ սարքավորումներ առաջարկելու դեպքում հնարավոր չէր լինի կատարել վերը նշված աշխատանքները, և կառաջանար գնի էական տարբերություն:

Հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը 24.02.2017թ. թիվ 8 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից հրավերով սահմանվել էր գնման առարկայի այնպիսի բնութագիր, որը կհանգեցներ Պատվիրատուի համար գնման գործընթացի անարդյունավետ և անօգտավետ իրականացմանը և վերջինիս կարիքի համար անհամապատասխան ծառայության ձեռքբերմանը, քանի որ տվյալ դեպքում գնման առարկայի բնութագրերով ամբողջությամբ և հստակ չէր նկարագրվել ձեռքբերվող ապրանքի և ծառայության հատկանիշները, մասնավորապես, տեխնիկական սարքավորումները անհրաժեշտ էին վերահսկողության աշխատանքների կազմակերպման համար, ինչը պետք է իրականացվեր պլանշետների միջոցով, սակայն Ընթացակարգի հրավերում պլանշետներ նախատեսված չէին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԲԽ-39/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի՝

անդամ՝ **Մարտիկ Նալբանդյան**

անդամ՝ **Մարիամ Սարգսյան**